

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«Վ. Է. Վ.»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՔԻ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԻ ԹԻՎ 1 ԵՎ 2 ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ՏԵՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

«Վ. Է. Վ.» ՍՊԸ տնօրեն՝



Ս. ԴԱՎԹՅԱՆ

ՕԳՏԱԿՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

- Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են
- Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.
- Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակարա հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում
- Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ
- Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում
- Կարմիր գիրք՝ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացող, կրճատվող, վտանգված տեսակների հաշվառման գիրք, որը փաստացի տվյալներ է պարունակում դրանց կենսաբանության, թվաքանակի, տարածման վայրերի, ձևաբանության վերաբերյալ: Բույսերի կարմիր գիրքը միջազգային պահանջները բավարարող հավաքական փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին:

- Հող՝ երկրի մակերևութային բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

- Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

- Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

- Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

- Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

- Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

ՀՀ Տավուշի մարզի Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասում <Վ.Է.Վ.> ՍՊ ընկերությունն իրականացրել է քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ, որի արդյունքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 15.04.2021թ.թիվ 496-Ս հրամանով 2020թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ B կարգով հաստատվել են աղբյուրների պաշարները 1.76լ/վրկ կամ 0.149հազ.մ³/օր քանակով:

<Վ.Է.Վ.> ՍՊ ընկերությունը դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ստանալու ՀՀ Տավուշի մարզի Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի թիվ 1 և 2 աղբյուրների հաշվարկված և հաստատված պաշարից քղցրահամ ջրի արդյունահանման իրավունք՝ արդյունաբերական (շալցման) նպատակով, 20 տարի ժամկետով:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 0.55լ/վրկ կամ 15768.0 մ³/տարի:

Ընկերության կողմից ստորերկրյա քաղցրահամ ջրի շալցման գործընթացը կիրականացնի աղբյուրներից շուրջ 500մ հեռավորության վրա գտնվող 2942մ² տարածքում, որտեղ նախատեսվում է կառուցել շալցման արտադրամասն իր ենթակառուցվածքներով /կցվում է տարածքի հատակագիծը/:

Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, էլեկտրահաղորդման գծեր և այլ օժանդակ շինություններ չեն նախատեսվում:

Ընկերության շալցման արտադրամասը հագեցած կլինի ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով: Արտադրամասի բոլոր անհրաժեշտ սարքավորումները կբերվեն ՌԴ-ից և տեղում տեղադրվեն:

Նախատեսվում է ստորերկրյա քաղցրահամ ջրի շալցման արտադրամասում տեղադրել մեկ հատ շալցման հոսքագիծ (պլաստմասե – տարաներում շալցման համար), որի արտադրողականությունը կազմում է 1100 հատ 6.0 լիտրանոց տարողությամբ շիշ մեկ ժամում:

Ընկերությունը ստանալով Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի հանքավայրի թիվ 1 և 2 աղբյուրների արդյունահանման իրավունքն և իրականացնելով այն կապահովի շուկայի պահանջարկը, կստեղծի մի քանի տասնյակ աշխատատեղեր, որն իր հերթին կնպաստի Հովքի և հարակիչ բնակավայրերի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

Հանքավայրի առաջին աղբյուրի տարածքի՝ ներկայացված կոորդինատներով եզրագիծը (մակերեսը՝ 0.3579 հեկտար) կադաստրային քարտեզում տեղադրելիս ամբողջությամբ համընկել է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հովք գյուղում գտնվող 11-044-0107-0007 կադաստրային ծածկագրով, պետական սեփականություն հանդիսացող (անհատույց օգտագործման իրավունքով տրված «Հայանտառ» ՊՈԱԿ-ին, վարձակալությամբ տրված Հայտը ներկայացրած «Վ.Է.Վ.» ՍՊԸ-ին) անտառային նշանակության անտառի սահմանների հետ: Հանքավայրի երկրորդ աղբյուրի տարածքը (մակերեսը՝ 0.15015 հեկտար) ներկայացված կոորդինատներով կադաստրային քարտեզում տեղադրելիս համադրվել է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հովք գյուղի հետևյալ կադաստրային ծածկագրերով հողամասերի հետ՝

- 11-044-0311-0007 - պետական սեփականություն հանդիսացող (անհատույց օգտագործման իրավունքով տրված «Հայանտառ» ՊՈԱԿ-ին, վարձակալությամբ տրված Հայտը ներկայացրած «Վ.Է.Վ.» ՍՊԸ-ին) անտառային նշանակության անտառ,
- 11-044-0311-0001 - պետական սեփականություն հանդիսացող անտառային նշանակության անտառ,
- 11-044-0561-0002 - պետական սեփականություն հանդիսացող (անհատույց օգտագործման իրավունքով տրված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության տրանսպորտի օբյեկտների հող:

1.2. Նախագծման նորմատիվ-իրավական հենքը

Շրջակա միջավայրը դա մարդու բնակության և արտադրական գործունեության միջավայրն է, որը պահպանության և ազդեցության գնահատման կարիք ունի:

Արդյունաբերական աշխատանքների իրականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

1. Հայաստանի Հանրապետության «Ընդերքի մասին» օրենսգիրք (01.01.2012թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
2. Հայաստանի Հանրապետության «Ջրային» օրենսգիրք (04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման, համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
3. Հայաստանի Հանրապետության «Հողային» օրենսգիրք (02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
4. Հայաստանի Հանրապետության «Անտառային» օրենսգիրք (24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները

5. <Բուսական աշխարհի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքը (23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքանությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
6. <Կենդանական աշխարհի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքը (03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների Հայաստանի Հանրապետությունում պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքանությունը:
7. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (01.11.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
8. <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենք> Հայաստանի Հանրապետության օրենքը (09.08.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
9. ՀՀ կառավարության 26.05.2006թ.-ի թիվ 750-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
10. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),

11. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում
12. «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 676-Ն որոշում,
13. «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշում:
14. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ Գտնվելու վայրը


Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի թիվ 1 և 2 տեղամասերը վարչատնտեսական առումով գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Հովք բնակավայրի վարչական տարածքի արևելյան ծայրամասում, Աղստև գետի միջին հոսանքի ավազանում, Հովք գյուղից՝ թիվ 1 աղբյուրը 2.6կմ դեպի հյուսիս-արևելք, իսկ թիվ 2 աղբյուրը Հովք գյուղից 3.3կմ հարավ-արևելք: Հետախուզվող թիվ 2 աղբյուրը գտնվում է թիվ 1 աղբյուրից 1.6կմ դեպի հարավ: Հետախուզվող տարածքը զբաղեցնում է 0.5հա մակերես, այդ թվում թիվ 1 աղբյուրի տեղամասը 0.35հա, թիվ 2 աղբյուրի տեղամասը 0.15հա:

Տեղամասերի ամենամոտ բնակավայրերը Հովք, Աղդան, Գոշ, Գանձաքար, Աղավնավանք գյուղերն են, որոնք միմյանց հետ կապված են ասֆալտապատ ճանապարհներով: Բնակչությունն այս շրջանում խիտ է բնակեցված:

Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերը զբաղեցնում են 0.5հա (1-ին աղբյուր- 0.35հա, 2-րդ աղբյուր- 0.15հա) մակերես և սահմանափակվում է ստորև նշված ծայրակետային կոորդինատներով:

ARM WGS-84 կոորդինատների համակարգով		
Հ/հ	X	Y
Թիվ 1 աղբյուրի տարածք (S=3549մ ²)		
1.	4516019	8505841
2.	4516044	8505823
3.	4516044	8505884
4.	4515976	8505884
5.	4515976	8505821
Թիվ 2 աղբյուրի տարածք (S=1494մ ²)		
6.	4517537	8505241
7.	4517537	8505281
8.	4517498	8505282
9.	4517498	8505241
10.	4517522	8505245

**ՀՈՎՔԻ ՔԱՂՑՐԱՀԱՍ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԹԻՎ 1 ԵՎ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ
ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ**



Նկար 1.
(հատված 1:50 000 մասշտաբի տոպոգրաֆիական քարտեզից)

Տարածաշրջանի խոշոր քաղաքաշինական միավորը Իջևան քաղաքն է, որը գտնվում է Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասից մոտ 12կմ հեռավորության վրա և հանդիսանում է Տավուշի մարզի հյուսիս-արևելյան հատվածի վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոն և տրանսպորտային հանգույց:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է (մասնավորապես՝ փայտամշակումը, սննդամթերքի, հանքային ջրի և գինու արտադրությունը):

Իջևան քաղաքը հայտնի է նաև գորգագործությամբ: Իջևան քաղաքը հանդիսանում է ՀՀ 10-րդ քաղաքը, այստեղ են բնակվում ՀՀ քաղաքային բնակչության շուրջ 1,1% -ը:

▪ **Ռելիեֆ, երկրաձևաբանություն**

Լեռնագրական առումով Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերը գտնվում են Միափորի և Գուգարաց լեռները բաժանող Աղստև գետի կիրճում:

Գուգարաց լեռները սկսվում են Հալաբի լեռնաշղթայից, տարածվում հյուսիս՝ մինչև Պապաքարի լեռնաշղթա: Երկարությունը 80կմ է, միջին բարձրությունը՝ 2000մ, առավելագույնը՝ 2244մ (Չաթին լեռ): Հովհարաձև տարածված լեռնահամակարգ է՝ խիստ մասնատվածությամբ, էրոզային հովիտների խիտ ցանցով: Հյուսիս-արևելքում լանջերն աստիճանաբար իջնում են դեպի Կուրի հովիտ, հարավայինը գառիթափ՝ դեպի Վերին Աղստևի ճկվածքախազումնային գոգահովիտ:

Միափորի լեռները ձգվում են 54կմ երկարությամբ հյուսիս-արևմուտք՝ Աղստևի և Գետիկի միախառնման անկյունից մինչև Քաշաթաղ գագաթը՝ հարավ-արևելյան մասում՝ Առավելագույն բարձրությունը Միափոր լեռն է, որը ունի 2993մ բարձրություն, Հաղարծին գյուղի հարևանությամբ են գտնվում Աբեղաքարը (2050 մ) և Մարի քարը (2170 մ):

Լեռնագրական խոշոր միավորներից են Աղստևի ու դրա վտակների կողմից ստեղծված էրոզիոն հովիտը: Աղստև գետի ստորին հոսանքում գետահովտի լանջերը կտրտված են սաղր գետակների ձորակներով:


Լանջերի մակերևույթն առանձին հատվաներում դարավանդավորված է: Հատկանշական է կումուլյատիվ (նստվածքագոյացման) հովիտների առկայությունը, որտեղ գետի հոսանքի դանդաղեցման պատճառով տեղի է ունենում դելյուվիալ զանգվածի նստեցում:

Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 2 և 3-ում:

Տեղամասի շրջանը աչքի է ընկնում խիստ մասնատված ռելիեֆով, որի բացարձակ բարձրությունները տատանվում են 800-ից 2000մ-ի սահմաններում:


Տեղամասը տեղակայված է Միափորի և Գուգարաց լեռները բաժանող Աղստև գետի կիրճում՝ որտեղ Գետիկը թափվում է Աղստևի մեջ: Շրջանի հարավ-արևելյան մասում վեր է խոյանում Միափորի բարձրագույն Շունքար լեռը:

Հովք տեղամասի թիվ 1 աղբյուրը ներառված է սողանքային մարմնի սահմաններում (նկար 4): Սողանքը կայունացված է: Մակերեսին չկան արտահայտված ձեղքեր: Բուսական ծածկույթի ամբողջականությունը խախտված չէ




Նկար 2.

Շրջանի լեռների մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզը



Նկար 3.



Նկար 4.

- **Շրջանի կլիման**

Տեղամասի տարածքին բնորոշ է բարեխառն տաք և խոնավ կլիման: Տարեկան միջին ջերմաստիճանի տատանումը չի գերազանցում 24°C: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 9.2-10.5°C, հունվարին՝ -0 -1.3°C, հուլիսին՝ 19.9-21.3°C: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 37°C, բացարձակ նվազագույնը՝ -26°C: Անսառնամանիք ժամանակահատվածը տատանվում է 200-ից 210 օր: Ձնածածկույթն առաջանում է ոչ ամեն տարի: Ձնաշերտի հաստությունը տատանվում է 5-ից 50 սմ, իսկ լեռների հյուսիսային լանջերին այն հաճախ գերազանցում է 70 սմ-ը: Տեղումների տարեկան միջին քանակությունը 526 մմ է:

Ստորև NN1-4 աղյուսակներում ներկայացվում է շրջանի կլիմայական բնութագրերն ըստ մոտակա Իջևան օդերևութաբանական կայանի:

Տեղամասի շրջանի կլիմայական գոտիների բաշխման քարտեզը ներկայացված է ստորև նկար 5-ում:

Աղյուսակ 1.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Կայանի բարձրություն ծովի մակարդակից, մ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
732	0,6	1,5	4,6	10,1	14,6	17,9	21,2	21,0	17,0	11,6	6,6	2,6	10,8	-19	39

Աղյուսակ 2.

Օդի Հարաբերական խոնավությունը

Կայանի բարձրություն ծովի մակարդակից, մ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
732	67	69	71	69	75	72	68	68	71	75	73	69	71	64	49

Աղյուսակ 3.


Մթնոլորտային տեղումները և ձնածածկը

Տեղումների քանակը, մմ միջին ամսական/արավելագույն տարեկան													Ձնածածկույթ		
Ըստամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի արավելագույն քանակը, մմ
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեդպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
22	30	45	63	100	98	58	39	40	47	36	22	600	33	37	65
28	31	29	41	46	63	92	71	41	46	32	24	92			

Աղյուսակ 3.

Արևափայլի տևողությունը

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեդպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Գումար ային
124	118	132	143	173	206	200	183	171	145	111	112	1818



Նկար 5

1. Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան Հովքի քաղցրահամ ջրերի աղբյուրների տեղամասերի տարածքում և հարակից շրջանում չկա: Որոշակի պատկերացում տեղամասի տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով:

Դրա համար ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
-125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Տեղամասի տարածքին ամենամոտ գտնվող բնակավայրը Հովք գյուղն է, որտեղ մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 450 մարդ: Հետևաբար, տեղամասի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցամիջ պետք է ընդունել. փոշի 0,2մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0,02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0,008մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0,4մգ/մ³:

Իջևանի հիդրոմետ կայանի տվյալներով բազմամյա միջին տարեկան տեղումների քանակը տատանվում է 339-688մմ սահմաններում, միջինը կազմելով 571մմ:

Շրջանում մթնոլորտային տեղումները տարվա ընթացքում հիմնականում հավասարաչափ է բաշխվում, որն էլ ապահովում է ստորերկրյա ջրերի մշտական սնուցումը: Տեղումները հիմնականում անձրևի տեսքով են, հաճախ էլ լինում են հորդառատ:

Տարածաշրջանում գարունը երկարատև է առատ խոնավությամբ, կեսօրից հետո հաճախ գերիշխում են հորդառատ անձրևները: Չմեռը կարճատև է: Կայուն ձյան ծածկույթը հաստատվում է դեկտեմբերի վերջերին և հունվարի սկզբներին: Չնհալքը վերջանում է մարտի վերջին, երբեմն ապրիլի վերջին: Չյան ծածկի հաստությունը կազմում է 5-10սմ հովիտներում, իսկ բարձրադիր մասերում՝ 15-20սմ, հաճախ նաև ավելի:

Ըստ Իջևանի մետրոլոգիական կայանի տվյալների տարվա մեջ ձնածածկույթ օրերի քանակը 37 օր է, ձյան առավելագույն տասնօրյակայն բարձրությունը 33սմ, ձյան մեջ ջրի առ Չյան ծածկը մեծ նշանակություն ունի ստորերկրյա ջրերի սնուցման և ռեժիմի համար:

Ստորև բերվում է Իջևանի մետրոլոգիական կայանի կողմից տրված շրջանի բազմամյա միջին ամսական և միջին տարեկան քամիների տարածման, խոնավության և տեղումների վերաբերյալ 5-ամյա տվյալներ:

Շրջանի բազմամյա միջին ամսական և միջին տարեկան քամիների տարածումն ըստ Իջևանի մետրոլոգիական կայանի տվյալների

Տարիները	Միջին արագությունը /մ/վրկ/												Միջին տարեկանը
	1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ			
	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
2016	2.2	2.4	2.2	1.9	2.0	2.0	1.6	1.8	1.8	1.3	1.6	1.8	1.9
2017	2.2	2.4	2.0	1.9	1.9	1.9	2.0	2.0	2.0	2.1	1.8	1.9	2.0
2018	1.7	1.2	1.9	1.9	2.1	2.0	2.0	1.7	1.8	2.1	2.0	1.7	1.8
2019	2.2	2.0	1.8	2.0	2.3	2.0	2.1	1.8	2.0	1.7	1.8	2.1	1.9
2020	2.2	2.4	1.9	1.8	2.0	1.6	1.8	1.8	-	-	-	-	1.9

Աղյուսակ 2.

Շրջանի բազմամյա միջին ամսական և միջին տարեկան խոնավությունն ըստ Իջևանի մետրոլոգիական կայանի տվյալների

Ամիսները	դեկադա	Միջին խոնավություն				
		2016	2017	2018	2019	2020
1	2	3	4	5	6	
Հունվար	1	74	48	78	70	71
	2	62	75	87	63	72
	3	77	72	78	74	71
Միջինը		71	65	81	69	71
փետրվար	1	60	69	77	80	85
	2	69	75	90	80	63
	3	73	57	85	72	65
Միջինը		67	67	84	77	71
մարտ	1	65	75	81	69	76
	2	72	79	69	68	64
	3	70	64	78	83	70
Միջինը		69	73	76	73	70
ապրիլ	1	68	70	84	82	72
	2	69	73	84	74	66
	3	72	74	83	76	80
Միջինը		70	72	84	77	80
մայիս	1	79	79	81	75	83
	2	81	83	83	76	85
	3	77	81	80	78	70
Միջինը		79	81	81	79	79

հունիս	1	80	75	85	71	77
	2	77	81	83	70	76
	3	72	74	69	70	76
Միջինը		76	77	79	70	76
1	2	14	15	16	17	3
հուլիս	1	77	70	70	65	67
	2	71	69	78	71	71
	3	76	64	75	67	64
Միջինը		75	68	74	68	64
օգոստոս	1	66	58	77	65	67
	2	65	68	87	63	66
	3	59	61	76	63	81
Միջինը		63	62	80	64	71
սեպտեմբեր	1	73	67	76	84	-
	2	70	67	79	76	-
	3	71	80	82	72	-
Միջինը		71	71	79	77	-
հոկտեմբեր	1	70	87	79	74	-
	2	85	81	85	70	-
	3	90	74	77	73	-
Միջինը		82	81	80	72	-
նոյեմբեր	1	66	82	88	74	-
	2	76	77	88	70	-
	3	71	76	79	85	-
Միջինը		71	78	85	76	-
դեկտեմբեր	1	76	79	90	83	-
	2	72	74	88	71	-
	3	67	72	82	72	-
Միջինը		72	75	87	75	-

Աղյուսակ 3.

Շրջանի բազմամյա միջին ամսական և միջին տարեկան տեղումներն ըստ Իջևանի մետրոլոգիական կայանի տվյալների

Ամիսները	դեկադա	Տեղումների քանակը, մմ				
		2016	2017	2018	2019	2020
1	2	3	4	5	6	7
Հունվար	1	4,8	27,4	-	7,4	5.2
	2	0,6	7,6	1,6	4,6	6,5
	3	-	17,4	12,7	10,2	5.3
	Ամսական	5.4	52.4	14.3	22.2	17.0

փետրվար	1	21,2	18,3	6,6	3,7	9,3
	2	21,8	3,0	5,7	26,9	7.8
	3	2,3	-	3,5	3,8	10.9
	Ամսեկան	45.3	21.3	15.8	34.4	28.0
մարտ	1	5,6	0	0,6	11,5	7.1
	2	21,6	27,2	13,8	22,0	4,3
	3	22,4	11,1	6,3	17,0	27,6
	Ամսեկան	49.6	38.3	20.7	50.5	39.0
ապրիլ	1	16,9	2,7	9,4	9,4	20.2
	2	29,1	0,6	11,3	21,9	18.1
	3	64,3	26,8	11,2	20,2	17.7
	Ամսեկան	110.3	30.1	31.9	51.5	56.0
մայիս	1	38,4	15,5	27,4	28,9	38,3
	2	26,9	61,2	29,1	18,3	33.5
	3	16,9	18,8	27,3	53,5	24.2
	Ամսեկան	82.2	95.5	83.8	100.7	96.0
հունիս	1	37,0	57,6	5,8	60,1	28.3
	2	34,9	58,6	24,1	38,8	15.1
	3	6,6	8,2	5,4	-	18.6
	Ամսեկան	78.5	124.4	35.3	98.9	62.0
հուլիս	1	1,2	34,5	17,6	8,4	20.3
	2	4,4	31,3	13,6	50,3	24,7
	3	0	14,2	15,0	3,0	0
	Ամսեկան	5.6	46.7	46.2	61.7	45
օգոստոս	1	20,6	2,8	0,3	27,2	0
	2	5,7	16,7	3,2	20,5	0.3
	3	22,3	2,7	0	-	20.6
	Ամսեկան	48.6	22.2	3.5	47.7	20.9
սեպտեմբեր	1	0	14,5	-	3,0	-
	2	3,4	2,0	3,7	7,6	-
	3	0	20,7	18,1	8,2	-
	Ամսեկան	3.4	37.2	21.8	18.8	-
հոկտեմբեր	1	35,1	-	32,3	3,3	-
	2	17,3	37,2	15,1	0	-
	3	57,7	20,6	3,2	22,4	-
	Ամսեկան	110.7	57.8	50.6	25.7	-
նոյեմբեր	1	2,7	18,6	26,7	6,2	-
	2	-	3,6	0,5	13,3	-
	3	-	1,4	5,4	17,5	-
	Ամսեկան	2.7	23.6	32.6	37.0	-

դեկտեմբեր	1	13,6	4,2	9,9	8,8	-
	2	-	18,6	-	6,0	-
	3	-	0,6	8,5	6,0	-
	Ամսեկան	13.6	23.4	18.4	20.8	-
Տարեկան		555.9	572.4	375.0	559.9	-

2. Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով: Շրջանի գետային ցանցը պատկանում է Քուռ գետի ավազանին, որտեղ գլխավոր ջրային արտերիան Աղստև գետն է, որը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի Թեժլեռ գագաթի հյուսիս-արևմտյան 2985մ բարձրության լանջից, , ունի հյուսիսային և հյուսիս-արևելյան ուղղություն և բաժանում է Փամբակի ու Խալաբի լեռնաշղթաները: Սկզբում այն մի փոքրիկ առվակ է, սակայն Դիլիջանի մոտ հորդանալով, դառնում է ջրառատ գետ: Այն անդրսահմանային գետ է, երկարությունը 133կմ է, ջրհավաք ավազանը 2500կմ²: Հայաստանի տարածքում երկարությունը 99 կմ է ջրհավաք ավազանը 1730կմ²: Ջրի ծախսը 8.22մ³/վրկ է, հոսքը 256 մլն.մ³: Այն թափվում է Քուռի մեջ: Մնվում է գերազանցապես ձնհալքից և անձրևաջրերից՝ Վտակներից հայտնի են Բլղանը, Հաղարծինը, Սառնաջուրը, Պայտաջուրը, Գետիկը և Ոսկեպարը: ՀՀ տարածքում Աղստևի վրա կառուցված է Ջողազի ջրամբարը, իսկ գետի ստորին հոսանքում (Արդրբեջանի տարածքում)՝ Աղստևի ջրամբարը՝ Գետի խորությունը մեծ չէ, սակայն զարնանայաին վարարումների ժամանակ դառնում է վտանգավոր:

Բազմամյա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Աղստև գետի ջրերի ջերմային ռեժիմը չի շեղվում ընդհանուր օրինաչափությունից, այսինքն ջրի նվազագույն ջերմաստիճանները (0,5°C,) նկատվել են գետերի վերին հոսանքներում, իսկ առավելագույն ջերմաստիճանները նկատվել են գետերի ստորին հոսանքներում (20,4°C) : Ուսումնասիրություններից պարզվել է, որ Աղստև գետի ջրերում pH-ը գտնվում է հիդրոբիոտների մեծ մասի զարգացման համար օպտիմալ սահմաններում: Ըստ pH-ի արժեքի Աղստև գետի ջրերը պատկանում են չեզոք, թույլ հիմնային և հիմնային ռեակցիա ունեցող ջրերի դասին: Միջավայրի չեզոք և թույլ հիմնային ռեակցիայի դեպքում գետերի ջրերում առկա են Ca(HCO₃)₂ և Mg(HCO₃)₂ աղեր, իսկ միջավայրի հիմնային ռեակցիայի դեպքում՝ Na₂CO₃ կամ NaHCO₃ աղեր:

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը Աղստև գետի ջրերի մոնիտորինգ իրականացնում է չորս դիտակետերում: Դրանցից քաղցրահամ ջրերի տեղամասին ամենամոտը N17 դիտակետն է, որը գտնվում է Իջևան քաղաքից 1կմ հոսանքով ներքև: Ըստ N17 դիտակետում կատարված ուսումնասիրությունների՝ ջրի որակը «միջակ» 3-րդ դասի է, պայմանավորված երկաթի և կախյալ նյութերի բարձր պարունակություններով:


3. Հողեր

Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերի շրջանում հիմնականում տարածված են հողերի 2 հիմնական տիպեր՝ անտառային և լեռնամարգագետնային, սահմանափակ տարածում ունեն մարգագետնատափաստանային սևահողանման հողերը: Հողերի բնական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է ստորև, նկար 6-ում:

Անտառային գոտում գերակշռում են անտառային դարչնագույն հողերը, որոնք աչքի են ընկնում հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Կարբոնատներով հարուստ մայր ապարների վրա զարգացած են կարբոնատահումուսային հողերը, որոնք տափաստանացված շագանակագույն հողերի հետ միասին մոզաիկ ձևով հանդիպում են ողջ անտառային գոտում: Ենթալպյան գոտում զարգացած են լեռնա-մարգագետնային սևահողերը:

Մարգագետնատափաստանային հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր:

Լեռնամարգագետնային հողերը ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներից:



- ① Լեռնամարգագետնային թույլ ճմային խորքային - չհագեցած փոքր հզորության կավավազային թույլ - միջին հողմահարված
- ② Լեռնամարգագետնային թույլ ճմային փոքր հզորության կավավազային
- ③ Մարգագետնատափաստանային սևահողանման քարքարոտ միջին հզորության կավավազային
- ④ Մարգագետնատափաստանային սևահողանման քարքարոտ փոքր հզորության կավավազային թույլ - միջին հողմահարված
- ⑤ Մարգագետնատափաստանային սևահողանման մնացորդային - կարբոնատային փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑥ Անտառային գորշ քարքարոտ փոքր հզորության կավավազային թույլ - միջին հողմահարված
- ⑦ Անտառային գորշ մարգագետնացված միջին հզորության կավավազային
- ⑧ Անտառային գորշ տափաստանացված փոքր հզորության կավավազային
- ⑨ Անտառային դարչնագույն լվացված կավայնացված միջին հզորության և հզոր թույլ հողմահարված
- ⑩ Անտառային դարչնագույն լվացված կավայնացված փոքր հզորության և հզոր թույլ հողմահարված
- ⑪ Անտառային դարչնագույն լվացված տափաստանացված միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑫ Անտառային դարչնագույն լվացված տափաստանացված հզոր կավային մշակովի
- ⑬ Անտառային դարչնագույն լվացված տափաստանացված միջին հզորության կավային թույլ հողմահարված մշակովի
- ⑭ Անտառային դարչնագույն տիպիկ կավայնացված միջին հզորության
- ⑮ Անտառային դարչնագույն կարբոնատային փոքր հզորության կավավազային միջին - ուժեղ հողմահարված
- ⑯ Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑰ Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑱ Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված միջին հզորության կավային մշակովի
- ⑳ Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- ㉑ Արմատական ասպարների ելքեր

Նկար 6

Պարունակում են մեծ քանակության հումուս (18-25, երբեմն 25-30%): Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից հզորությունը տատանվում է 15-20-ից 40-50սմ-ի սահմաններում: Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է, հողային լուծույթի ռեակցիան թթվային է, pH

տատանվում է 4.5-6.4-ի սահմաններում: Լեռնամարգագետնային հողերը բնորոշվում են մակերեսային և խորքային թաղված ուժեղ քարքարոտությամբ:

Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը ձևավորվել են 700-1700մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոսորակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում: Այս հողերը նկարագրվող շրջանում հանդես են գալիս լվացված, տիպիկ և կարբոնատային ենթատիպերով: Լվացված դարչնագույն անտառային հողերը զբաղեցնում են ստվերահայց լանջերը և ձևավորվել են համեմատաբար ավելի խոնավ պայմաններում, քան տիպիկ ենթատիպը:

Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերի տարածքում հողաբուսական շերտը ներկայացված է անտառային դարչնագույն տարալվացված և կարբոնատային հողերով: Դրանց բնորոշ է փոքր հզորություն (առավելագույնը մինչև 0.3մ): Հումուսի պարունակությունը հողերում կազմում է 4.78%, CO₂-ը՝ 5.17%, կատիոնների գումարը 100գ հողում՝ 15.59մ/էկվ, pH ջրային քաշվածքում՝ 7.8:

▪ **Բուսական և կենդանական աշխարհ**

Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերի տարածաշրջանի բուսականության գերիշխող տիպը անտառայինն է: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (*Fagus orientalis*), վրացական կաղնին (*Quercus iberica*), խոշորառեչ կաղնին (*Q. macranthera*), կովկասյան բոխին (*Carpinus caucasica*), դաժին կամ արևելյան բոխին (*C. orientalis*): Մրանց ուղեկցում են դաշտային (*Acer campestre*), սրատերև (*A. platanoides*) և բարձրլեռնային (*A. trautvetteri*) թխկիները, լոբենին (*Tilia caucasica*), հացենին (*Fraxinus excelsior*), արոսենին (*Sorbus aucuparia*, *S. graeca* և այլն): Հանդիպում են նաև վայրի պտղատուներ՝ կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), արևելյան խնձորենին (*Malus orientalis*), սալորենին (*Prunus divaricata*), մամիսենին (*P. spinosa*), ընկուզենին (*Juglans regia*), սովորական տիլենին (*Corylus avellana*), հոնին (*Cornus mas*), սգնու տարբեր տեսակներ (*Crataegus*), զկեռենի (*Mespilus germanica*), թխենի (*Padus*) և այլն: Հարուստ է նաև հասապտղատուների բազմազանությունը՝ հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus caesius*), մորի (*R. idaeus*), կոկոռշենի (*Grossularia*) և այլն: Առանձին

հատվածներում դիտվում են գիհու նոսրանտառները, որոնք ներկայացնում են բազմապտուղ (*Juniperus polycarpus*) և սրաթեփուկ կամ գարշահոտ (*J. foetidissima*) գիհիները: Մինչև 1100 մ բարձրության վրա փոքր տարածքներով հանդիպում են շիբլյակ կոչված թփուտները: Անտառագուրկ ոչ մեծ տարածքներում հանդիպում են այս շրջանի համար ոչ բնորոշ շյուղախոտ վալեսյանի (*Festuca valesiaca*) գերակշռությամբ տափաստանային խմբավորումները, որոնց կազմում բավականին շատ են մարգագետնային բուսատեսակները: 1800-1900 մ-ից բարձր տարածված են մերձալպյան մարգագետինները, ուր գերիշխում են խառը տարախոտ-հացազգային համակեցությունները:

Մ4 միջպետական ճանապարհին հարակից հատվածներում՝ մինչև գետեզրն ընկած տարածքում աճում են ուռենի (*Salix*), բոշխ (*Carex*), գորսնուկ (*Ranunculus*), կնյուն (*Juncus*) ցեղերի ներկայացուցիչներ: Տարածված են հիգրոֆիտ բուսատեսակներ՝ *Epilobium hirsutum*, *Mentha longifolia*, *Phragmites australis*, *Veronica anagallis-aquatica*:

Բուսականության հիմնական տիպի տարածման քարտեզը ներկայացված է ստորև, նկար 7-ում:

Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերի տարածքում կենդանական աշխարհի ներկայացուցիչներից դիտարկվել են ասիական մորեխ, թռչող զամբիկ, ագրիոն տեսակի ճպուռներ, հիդրոմետրա, ջրային բույսերի վրա բնակվող դոնացիա բզեզներ, սովորական դողոշ:

Տեղամասին հարակից ծառապատ տարածքներում դիտվել է փայտփոր, բու և կկու: Կաթնասուններից այս տարածաշրջանում բնակվում են անտառամուկ, սկյուռ, գայլ, աղվես, եվրոպական նապաստակ:

Տարածքների նախնական դիտարկումը կատարվել է հունվար-փետրվար ամիսներին: Տարածքում մակերևութային և ստորգետնյա բներ, որջեր չեն արձանագրվել:




Նկար 7.

▪ **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերի տարածքները չեն հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածքներ և այստեղ չի իրականացվում վտանգված էկոհամակարգերի պահպանություն:

Սակայն տեղամասի շրջանում է գտնվում «Դիլիջան» ազգային պարկը: «Դիլիջան» ազգային պարկի և քաղցրահամ աղբյուր 1-ի միջև հեռավորությունը կազմում է 1.5կմ, իսկ քաղցրահամ աղբյուր 2-ի միջև՝ 3,05կմ (նկար 8):



Նկար 8.

«Դիլիջան» ազգային պարկը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի «Դիլիջան» ազգային պարկ կազմակերպելու մասին» N 165 որոշմամբ՝ Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի 1958 թվականի սեպտեմբերի 13-ի «Հայկական ՍՍՌ բնության պահպանության մասին» օրենքի կիրառման մասին» N 341 որոշմամբ կազմակերպված «Դիլիջան» պետական արգելոցի և դրան հարակից տարածքների սահմաններում: Պարկի ստեղծման նպատակներն են՝

ա) Աղստև և Գետիկ գետերի ավազանների ջրային ու ցամաքային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի ապահովումը, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ու պատմամշակութային հուշարձանների պահպանությունը.

բ) հյուսիսային Հայաստանին բնորոշ հազվագյուտ և անհետացող վայրի բույսերի ու կենդանիների տեսակների, գենոֆոնդի և դրանց ապրելու միջավայրի պահպանությունը.

գ) բնական լանդշաֆտների, դրանց առանձին տարրերի, բնական գործընթացների և երևույթների գիտական ուսումնասիրությունը՝ ուղղված պարկի տարածքի բնական էկոհամակարգերում ընթացող գործընթացների կանխատեսմանն ու գնահատմանը, բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանմանը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ու բնության պահպանության գիտական հիմունքների մշակմանը, պարկին հարակից տարածքների համար բնության պահպանության և օգտագործման արդյունավետ ձևերի մշակման բազայի ապահովմանը:

Տեղամասից ավելի քան 4կմ հեռավորության վրա գտնվող «Դիլիջան» ազգային պարկի տարածքում առկա են բազմաթիվ բույսեր և կենդանիներ, որոնք հաշվառված են ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում աճող ազգային պարկի ֆլորայի 27 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Ազգային պարկի տարածքում ուսումնասիրված անողնաշարավորների 6 տեսակ և ձկների մեկ տեսակ Հայաստանի էնդեմիկ են: Ձկների 2 տեսակ, թռչունների 16 տեսակ և կաթնասունների 7 տեսակ գրանցված են ՀՀ կենդանիների կարմիր գրքում:

ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներից Իջևանի ֆլորիստիկական շրջանում հայտնի են.

1) կենի հատապտղային – վտանգված տեսակ, պահպանվում է Ախնաբաղի կենու պուրակում, տեղամասից մոտ 31կմ հեռավորության վրա ,

2) ձնծաղիկ ալպիական – վտանգված տեսակ է, աճում է Աչաջուր գյուղի շրջակայքում՝ տեղամասից մոտ 24կմ հեռավորության վրա,

3) ձնծաղիկ լագոդեխի, ոգնագլխիկ Տուրնեֆորի, պսեֆոլուս Դեբեդի, պարիլյակ բարձր, կոռն փետրավոր և թաղաղու դեղին – վտանգված տեսակներ են, աճում են Իջևան քաղաքի շրջակայքում՝ տեղամասից ավելի քան 12կմ հեռավորության վրա,

4) շտերնբերգիա շնդեղածաղկային – վտանգված տեսակ է, աճում է Գետահովիտ գյուղի շրջակայքում՝ տեղամասից մոտ 13կմ հեռավորության վրա,

5) արջտակ գարնանային – վտանգված տեսակ է, աճում է Աչաջուր և Գետահովիտ գյուղերի շրջակայքում՝ տեղամասից համապատասխանաբար 24 և 13կմ հեռավորությունների վրա :

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից Իջևանի շրջանում հայտնի են.

1) նմանաձև ճպուռը և Յացենկո-Խմելևսկու առվակային գնայուկը – հազվագյուտ տեսակներ են, հայտնի են Իջևան քաղաքի շրջակայքում՝ տեղամասից ավելի քան 12կմ հեռավորության վրա,

2) սոմխետական չրիկանը և հայկական ծաղկեփոշեկերը – հազվագյուտ տեսակներ են, հայտնի են Իջևան քաղաքի շրջակայքում՝ տեղամասից ավելի քան 12կմ հեռավորության վրա,

3) բրենթիս Ինո և ալկոն կապտաթիթեռ– հազվագյուտ տեսակներ են, հայտնի են միայն Իջևան քաղաքի շրջակայքում՝ տեղամասից ավելի քան 12կմ հեռավորության վրա,

4) մարգագետնային մողես – խոցելի տեսակ է, սաղարթավոր անտառների անտառեզրերում և բացատներում, հայտնի է «Դիլիջան» ազգային պարկի տարածքում, տեղամասից մոտ 2,5կմ հեռավորության վրա,

5) կարմրաոտ բազե – անհետացող տեսակ է, բնաֆրում է նոսրանտառներում կամ անտառեզրերում, պահպանվում է հայտնի է «Դիլիջան» ազգային պարկի տարածքում, տեղամասից մոտ 2,5մ հեռավորության վրա

6) գորշ արջ և խայտաքիս – խոցելի տեսակներ են, տարածված են հանրապետության գրեթե ամբողջ տարածքով, երևակման շրջանում՝ չորային նոսրանտառներում, տեղամասից մոտ 4կմ հեռավորության վրա :

Հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների նպատակով հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր, բներ, բնադրման վայրեր չեն արձանագրվել:

Բուն տեղամասի սահմաններում դիտարկված կենդանական և բուսական տեսակները չեն հանդիսանում պահպանվող՝ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված տեսակներ: Դրանք ունեն լայն տարածում ինչպես ՀՀ տարածքի ջրա-ճահճային համակեցություններում, այդպես էլ հանրապետության տարածքից դուրս:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

Աղյուսակ 6.

ՀՀ Տավուշի մարզում հաշվառված բնության հետևյալ հուշարձանները.

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	2	3
1	«Մոլլաքար» ժայռ	Տավուշի մարզ, Իջևան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, Իջևան-Երևան խճուղու ձախ կողմում
2	«Անանուն» պլազիոգրանիտներ	Տավուշի մարզ, Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, անտառտնտեսության մոտ
3	«Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Բերդ ավանի հս-արմ եզրին
4	«Անանուն» փոխակերպարային (մետամորֆիզացված) թերթաքարեր	Տավուշի մարզ, Վարազաձոր գետի վերին հոսանքում, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հվ-արմ
5	«Կալաքար» լեռ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 1.5 կմ հվ
6	«Անանուն» սյունաձև էքստրուզիվ մարմին՝ նեկկ	Տավուշի մարզ, Ծաղկավան գյուղից 2 կմ հվ
7	«Անանուն» դայկայանման մարմիններ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ գետի ձախ վտակի հովտում

1	2	3
8	«Փայտասար» քարանձավների համալիր	Տավուշի մարզ, Կողբ գյուղից 4 կմ հարավ
9	«Անանուն» կվարցային դիրքիտներ և գաբրոդիրքիտներ	Տավուշի մարզ, Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ գետի կիրճի աջ լանջին
10	«Անանուն» շերտագրական մերկացում	Տավուշի մարզ, Չինչին գյուղի հվ-արլ եզրին
11	«Անանուն» սանդղափուլ քարափներ	Տավուշի մարզ, Չինչին գյուղից 2.0 կմ հվ-արմ
12	«Օձաքար» լեռնագագաթ	Տավուշի մարզ, Պառավաքար գյուղից 3 կմ հս-արմ, Վաղաշեն տանող ճանապարհի աջ կողմում
13	«Նոյեմբերյանի սոսի»	Տավուշի մարզ, քաղ. Նոյեմբերյան, Չինարածորում
14	«Վարդան Մամիկոնյանի կաղնի»	Տավուշի մարզ, գ. Ակնաղբյուր, ծ.մ-ից 900 մ բարձրության վրա
15	«Սարի գյուղի սոսի»	Տավուշի մարզ, գ.Սարիգյուղ, Երևան-Նոյեմբերյան ճանապարհից աջ, ծ.մ-ից 750 մ բարձրության վրա
16	«Գետահովիտի մամռապատ ժայռ»	Տավուշի մարզ, Գետահովիտ գյուղի մոտ, Սառնաջուր գետի ձախ ափին, մոտ 700-800 մ բարձրության վրա
17	«Տանձուտ»	Տավուշի մարզ, Աղավնավանք գյուղի մոտ

Նշված բնության հուշարձանները գտնվում են տեղամասից 7,5-38կմ հեռավորության վրա: Տեղամասի հեռավորությունը բնության հուշարձաններից, ինչպես հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների տեխնոլոգիան թույլ են տալիս պնդել, որ ծրագրավորվող հետախուզական աշխատանքները չեն կարող որևիցե կերպ ազդել հուշարձանների վիճակի վրա:

Հանրավայրի պաշարները. Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրության նպատակով «Վ.Է.Վ.» ՍՊ ընկերության նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով իրականացրել է հիդրոերկրաբանական հետախուզական աշխատանքներ, որոնք ուղեկցվել են ռեժիմային դիտարկումներով՝ չափվել են աղբյուրների ծախսը, ջերմաստիճանը և կատարվել է ջրի նմուշարկում: Ստացված տվյալներով Հովքի ստորերկրյա քաղցրահամ աղբյուրների շահագործական պաշարները 01.10.2020թ.-ի

դրությամբ հաստատվել են 15.04.2021թ. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի թիվ 496-Ս հրամանով 2021թ.-ի ապրիլի 15-ին, որպես խմելու ջուր մանրագերծելուց հետո:

Հովքի ստորերկրյա քաղցրահամ աղբյուրների շահագործական պաշարները կազմում են 1.73լ/վրկ կամ 0.149հազ.մ³/օր, այդ թվում`

- աղբյուր 1 - 1.02լ/վրկ կամ 0.088հազ.մ³/օր,
- աղբյուր 2 - 0.71լ/վրկ կամ 0.06հազ.մ³/օր:

Թիվ 1 աղբյուրի տեղամասը գտնվում է Աղստև գետի աջափնյա ավազանում, Հովք գյուղից 2.6կմ դեպի հյուսիս-արևելք, զբաղեցնում է 0.35հա մակերես 1020.5-1055.1մ բացարձակ բարձրությունների վրա, իսկ բուն աղբյուրը գտնվում է 1030մ բացարձակ բարձրության վրա:


Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են ըստ Գրինվիչի.

40° 46' 41" - հյուսիսային լայնության,

45° 04' 10" - արևելյան երկայնության:

Թիվ 1 աղբյուրի կոորդինատներն են ` Y= 8505858 X= 4516013:

Աղբյուրի ջրի ծախսը տատանվել է 0.30-3.24լ/վրկ սահմաններում, միջինը կազմելով 2.46 ր/վրկ, ջերմաստիճանը տատանվել է 6.2-8.2°C սահմաններում, միջինը կազմելով 7.3°C: Ջրերը հիդրոկարբոնատ-կալցիում-մագնեզիումային են, հանաքայնացումը տատանվում է 0.33-0.48գ/լ սահմաններում, կազմելով միջինը 0.41գ/լ, ընդհանուր կոշտությունը կազմում է միջինը 4.5մգ/էկվ, P^H-ը տատանվում է 6.5-7.5մգ/լ սահմաններում, միջինը կազմելով 6.3մգ/լ: Համաձայն լաբորատոր հետազոտությունների տվյալների տեղամասի քաղցրահամ ջրերի քիմիական կազմի բանաձևն ըստ Կուռլովի ներկայացվում է հետևյալ կերպ`



Թիվ 2 աղբյուրի տեղամասը գտնվում է Աղստև գետի աջափնյա ավազանում, Հովք գյուղից 3.3կմ հարավ-արևելք, զբաղեցնում է 0.15հա մակերես 830.8-850.5մ բացարձակ բարձրությունների վրա, իսկ բուն աղբյուրը գտնվում է 840մ բացարձակ բարձրության վրա և թիվ 1 աղբյուրից գտնվում է 1.6կմ դեպի հյուսիս-հյուսիս-արևմուտք:


Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են ըստ Գրինվիչի.

40° 47' 30" - հյուսիսային լայնության,

45° 03' 50" - արևելյան երկայնության:

Թիվ 2 աղբյուրի կոորդինատներն են՝ Y= 8505263 X= 4517519:

Աղբյուրի ջրի ծախսը տատանվել է 0.32-2.25լ/վրկ սահմաններում, միջինը՝ 1.61լ/վրկ, ջերմաստիճանը տատանվել է 7.0-9.2°C սահմաններում, միջինը կազմելով 7.9°C: Ջրերը հիդրոկարբոնատ-կալցիում-մագնեզիումային են, հնաքայնացումը տատանվել է 0.34-0.46գ/լ սահմաններում, կազմելով միջինը 0.40գ/լ, ընդհանուր կոշտությունը միջինը 4.2մգ/էկվ է, P^H-ը տատանվել է 6.6-7.5մգ/լ սահմաններում, միջինը կազմելով 7.16մգ/լ: Համաձայն լաբորատոր հետազոտությունների տվյալների տեղամասի քաղցրահամ ջրերի քիմիական կազմի բանաձևն ըստ Կոտլովի ներկայացվում է հետևյալ կերպ՝



Երկու աղբյուրների ջրերն ըստ լաբորատոր հետազոտությունների արդյունքների անգույն են, անհոտ, թափանցիկ և առանց նստվածքի: Ռեժիմային դիտարկումների արդյունքում պարզվել է, որ աղբյուրների ջրերն ունեն կայուն ծախս և ջերմաստիճան: Ջրի ծախսերի մեծացման կամ իջեցման ժամանակահատվածները նույն հիդրոերկրաբանական պայմաններում կախված են տվյալ տեղամասի զբաղեցրած հիպսոմետրիկ նիշից: Աղբյուրների ջրերի սնուցումը կատարվում է մթնոլորտային տեղումների և ինֆիլտրացիայի հաշվին:

Տեղամասի աղբյուրները կապված են վերին յուրայի հասակի կարբոնատային ճեղքավոր և ճեղքա-կարստային ջրաթափանց ապարների հետ, որտեղ ջրերի ինֆիլտրացիայի միջին արժեքը կազմում է 36985172մ³/տարի կամ 102737մ³/օր, իսկ ջրի հոսքի մոդուլը 1կմ² մակերեսի վրա կազմում է միջինը 6.83լ/վրկ: Ստորերկրյա ջրերը տարածված են ճեղքավորված ապարների հողմահարված գոտում:

Աղբյուրների միջին ջերմաստիճանը տարեկան կտրվածքում տատանվում է աղբյուր 1-ում 6.5-8.0°C, իսկ աղբյուր 2-ում 7.1-9.0°C սահմաններում: Դիտարկման տարահների ընթացքում (2019-2020թ.թ.) չի նկատվում ջերմաստիճանի կտրուկ փոփոխություն, որը վկայում է աղբյուրի կայուն սնման /սեզոնային կամ ժամանակավոր/ գործոնի մասին և ըստ ջերմաստիճանային ռեժիմի աղբյուրների ջրերը բնորոշվում են որպես սառը ջուր:

Աղբյուրների ծախսի փոփոխման աստիճանը տարեկան կտրվածքում տատանվում է աղբյուր 1-ում 0.30-3.24 լ/վրկ, իսկ աղբյուր 2-ում 0.32-2.25լ/վրկ սահմաններում, իսկ

ընդհանուր առմամբ աղբյուրները հիմնականում բնորոշվում են կայուն ծախսով և ջերմաստիճանով:

Ծախսի տատանումները աղբյուրներում տարեկան կտրվածքում կազմում է 18.7-19.7 տոկոս, միջինը կազմում է 19.2%:

Համաձայն առողջապահության նախարարության «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ Տավուշի մասնաճյուղի փորձարկման սանիտարամանրեաբանական փորձարարական լաբորատորիայի եզրակացության, աղբյուրների ջրերը համապատասխանում են 6222-212 ՀՍՏ ԻՍՕ տեխնիկական պահանջներին:

Թիվ 1 և 2 քաղցրահամ աղբյուրների ջրերի մանրակրկիտ լաբորատոր ուսումնասիրությունները կատարվել են 2019-2020թ.թ. «Անալիտիկ» ՓԲ ընկերության լաբորատորիայում (70 նմուշների լրիվ քիմիական անալիզ): Լրիվ քիմիական անալիզի ստուգիչ 2 հետազոտություն և ջրերի սանիտարա-մանրեաբանական 2 հետազոտություն կատարվել է ՀՀ առողջապահության նախարարության «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ Տավուշի մասնաճյուղում:

Համաձայն անալիզների արդյունքների ջրերի իոնայաին կազմում գերակշռում են անիոններից հիդրոկարբոնատը, իսկ կատիոններից՝ կալցիումը և մագնեզիումը:

Լրիվ քիմիական անալիզի համար ներկայացված 70 նմուշներում երկաթ (Fe^{++}), նիտրիտ (NO_2^-), նիտրատ (NO_3^-), յոդ (J) և բրոմ (Br^-) իոններ չեն հայտնաբերվել: Սկնդեղի պարունակությունը բոլոր նմուշներում փոքր է 0.05մգ/լ-ից և գտնվում է թույլատրելի սահմանում (ԳՕՍՏ P 51232-98):

Լրիվ քիմիական անալիզների արդյունքում հայտնաբերված նիտրատների պարունակությունը 1.5-4մգ/լ է (համաձայն P 51232-98 ԳՕՍՏ-ի ԹԽՍ-45մգ/դմ³), մոլիբդեն և մկնդեղ չեն հայտնաբերվել, իսկ ֆտորի պարունակությունը 0.18մգ/լ է (թույլատրելի սահմանները համաձայն P 51232-98ԳՕՍՏ-ի՝ 0.7-1,5մգ/դմ³ է):

Լրիվ քիմիական անալիզի ստուգիչ հետազոտության ժամանակ հայտնաբերվել է պղնձի 0.01-0.03մգ/դմ³ (թույլատրելի սահմանները համաձայն P 51232-98ԳՕՍՏ-ի՝ Cu-1մգ/դմ³ է) պարունակություն, ալյումինում չի հայտնաբերվել, նիտրիդներ ևս չեն հայտնաբերվել:

Այսպիսով ըստ քիմիական կազմի թիվ 1 և 2 աղբյուրների ջրերը՝

- հիդրոկարբոնատ-կալցիում-մագնեզիումային են,
- քաղցրահամ են՝ ընդհանուր հանքայնացումը՝ աղբյուր 1-ում 0.33-0.48գ/լ է, աղբյուր 2-ում և 0.34-0.46գ/լ,

- փափուկ են, ընդհանուր կոշտությւնը աղբյուր 1-ում 3.8-5.0մգ.էկվ.լ է, աղբյուր 2-ում 3.8-5.0մգ.էկվ.լ,

- աղբյուրների չեզոք են, ջրածնային ցուցանիշը աղբյուր 1-ում (P^H -6.5-7.5) է, աղբյուր 2-ում (P^H -6.6-7.5) է:

Աղբյուրների ջրերի սանիտարա-մանրէաբանական հետազոտությունների արդյունքում ընդհանուր կոլիֆորմ մանրէների պարունակությունը աղբյուր 1-ում բացակայում են, իսկ աղբյուր 2-ում հայտնաբերվել է 0.9 միավոր և եթե համեմատենք ՀՀ տարածքի մյուս քաղցրահամ ջրերում կոլիֆորմ մանրէների պարունակության հետ, ապա կարող ենք վստահ ասել, որ ուսումնասիրված աղբյուրի ջրում դա անհամեմատ փոքր է: Աղբյուրների ջրերում ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէներ չեն հայտնաբերվել: Չեն հայտնաբերվել նաև կոլիֆագերներ:

Այսպիսով թիվ 1 և 2 քաղցրահամ աղբյուրի ջրերը պիտանի են խմելու և շշալցման համար և դրանց օգտագործումը ցանկալի է մանրէազերծելուց հետո, ինչպես ՀՀ տարածքի բոլոր քաղցրահամ ջրերը:

Համաձայն սանիտարա-մանրէաբանական հետազոտությունների արդյունքների նմուշներում մանրէների ընդհանուր քանակությունը համապատասխանում է 6222-212 ՀՍՏ ԻՍՕ տեխնիկական պահանջներին:

Աղբյուրների սնման և բեռնաթափման մարզերում բացակայում են ստորերկրյա ջրերը աղտոտող օբյեկտները: Տարածքում բացակայում են տեխնաժին գործոնները, որոնք կարող են պայմանավորել ստորերկրյա ջրերի որակական և քանակական փոփոխությունները: Հուսալի աղբյուրակազման դեպքում, աղբյուրի շահագործման համար կստեղծվի բավարար սանիտարական պայմաններ:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 0.55լ/վրկ:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

3.1. Ենթակառուցվածքներ

Հովքի քաղրահամ ջրերի թիվ 1 և 2 տեղամասերը գտնվում են ՀՀ Տավուշի մարզում՝ ՀՀ տարածքի հյուսիս-արևելյան հատվածում:

Տավուշի մարզը հարավում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին, պետական սահմանով՝ Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանին, Մարզն ունի մոտ 350 կմ միջպետական սահման, որից 300 կմ-ը Ադրբեջանի Հանրապետության, 50-ը՝ Վրաստանի հետ: Մարզի տարածքը 2704 քառ.կմ է, որը կազմում է ՀՀ տարածքի 9.1%-ը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 110751.5 հա, կամ մարզի ընդհանուր տարածքի շուրջ 40.9%-ը: Վարելահողերի և բազմամյա տնկարկների ոռոգելի տարածքները կազմում են 6403հա, կամ 23%-ը: Չմշակվող հողերը կազմում են մոտ 7210 հա, սահմանամերձ լինելու պատճառով: Մարզի շուրջ 4.3%-ը զբաղեցնում են բնակավայրերի, ջրային, էներգետիկայի, կապի և տրանսպորտի սպասարկման տարածքները և շուրջ 54%-ը՝ խառը անտառները/113566.7հա/ և հատուկ պահպանվող տարածքները/33031.6հա/, <<Դիլիջան>> Ազգային պարկ, արգելավայրեր, և այլն, որոնք կազմում են հանրապետության անտառային տարածքների 38%-ը, ընդգրկելով հիմնականում մարզի միջին և հարավային հատվածները:

Մարզն ընդգրկում է Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի (Շամշադինի) տարածաշրջանները:

ՀՀ Տավուշի մարզը հանդիսանում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը: ՀՀ Տավուշի մարզի մշտական բնակչությունը 2016թ-ին կազմել է 125.5 հազ. մարդ, որից քաղաքային՝ 52.9 (42.2%) հազ. մարդ, գյուղական՝ 72.6 (57.8%) հազ. մարդ: Տղամարդիկ կազմում են բնակչության 48.9%-ը, կանայք՝ 51.1%-ը:

Տավուշի մարզով են անցնում 152.6կմ միջպետական նշանակության ավտոճանապարհները կամ Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 10%-ը, որը ավտոտրանսպորտային կապ է ապահովում թե հարևան Վրաստանի Հանրապետության, թե հարակից մարզերի հետ:

Տավուշի մարզում բեռնա-ուղևորափոխադրումներն հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Այժմ միջպետական

փոխադրումներն իրականացվում են Երևան-Սևան-Իջևան-Նոյեմբերյան-Բագրատաշեն ավտոճանապարհով և ակտիվորեն օգտագործվում է մարզում գտնվող Բագրատաշենի մաքսակետը: Ներկայումս կապիտալ վերանորոգվում է Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն ավտոճանապարհը և շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2018թ.: Մինևոյն ժամանակ՝ Հանրապետությունում կառուցվում է Հյուսիս-Հարավ ավտոճանապարհը, որը կդառնա Հայաստանը Վրաստանի հետ կապող հիմնական ճանապարհը և հիմնական մաքսակետ կհանդիսանա Շիրակի մարզում գտնվող Բավրայի անցակետը:

Մարզում է գտնվում Այրումի երկաթուղային կայարանը, որը մարզի տնտեսության ակտիվացման ժամանակ կարող է մեծ խթան հանդիսանալ շահավետ բեռնափոխադրումներին երկայումս օգտագործվում է իր հնարավորությունների 15 % չափով: Դեպի Այրումի երկաթուղային կայարան՝ ներկայումս գործում է երկու գնացք՝ «Գյումրի-Այրում» էլեկտրագնացքը և «Թբիլիսի-Երեւան» մարդատար գնացքը: Մարզում առկա է Այգեպարի և Բագրատաշենի օդանավակայանները, որոնք չեն գործում:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվա Սելլ/ ՄՏՍ ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՍ» (Ucom ապրանքանիշ):

Մարզի բնակավայրերը 100 տոկոսով ապահովված են բջջային և ինտերնետ ծածկույթով /օպտիկամանրաթելային և եթերային - շարժական/: Մարզում ինտերնետից ակտիվ օգտվողների քանակությունը կազմում է մարզի բնակչության շուրջ 50%-ը:

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ:

Մարզում գործում են 13 փոքր ՀԷԿ-եր /բոլորը մասնավոր են/, որոնց ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է մոտ 19 ՄգՎտ:

Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս – Թբիլիսի - Երևան գազատարը: Մարզի գրեթե բոլոր բնակավայրերը, բացառությամբ՝ Կիրանց, Աճարկուտ, Բերքաբեր համայնքների, գազաֆիկացված են, գազի բաժանորդների

քանակությունը աճում է տարեց-տարի, 2016-ին ավելացել է ևս 1.5%, կազմել է 26 673: 3 չգազիֆիկացված բնակավայրերի գազիֆիկացման խնդիրը, որտեղ բնակվում են մարզի բնակչության 0,7 %:

Մարզի 28 բնակավայրերում գոյություն ունեն կոյուղու հեռացման գործող համակարգեր, որոնք սպասարկում են մարզի բնակչության 76.2%:

Միայն Դիլիջան քաղաքի կոյուղու համակարգը 2015 թվականից միացված է գործող կոյուղու մաքրման կայանին, որը սպասարկում է մարզի բնակչության 13.4 %, մնացած 27 բնակավայրերի կոյուղին միացված է հոսող գետերին:

Մարզի 8 համայնքներում, որոնցում բնակվում են մարզի 48% բնակչությունը աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: 4 քաղաք /Դիլիջան, Իջևան, Բերդ, Նոյեմբերյան/ ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչության 38 %:

Տավուշի մարզի բնակավայրերից 15-ը չունեն կայուն ջրամատակարարում: 11 բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն իրականացվում է «Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ի համապատասխան տեղամասերի կողմից /2017թ. հունվարի 1-ից համակարգերի սպասարկումը կիրականացվի ֆրանսիական «Վեոլիա Ջուր ընկերության կողմից/, որոնք սպասարկում են բնակչության 48%, իսկ մնացած բնակավայրերում՝ համայնքապետարանների կողմից:

Տավուշի մարզի բնակչության 50%-ն ունի 8 և ավելի ժամ ջրամատակարարում:

Մարզի համար կարևոր ոլորտ է հանդիսանում նաև զբոսաշրջությունը, որի աճը վերջին տարիներին բավականին զգալի էր, անկախ այն փաստից, որ 2015 թ. հասույթը ավելի ցածր է եղել քան 2014 թ. հասույթը:

2011 թ. սկսած հյուրանոցային տնտեսության հասույթները աճել են շուրջ 2,3 անգամ միջին հանրապետական 2,0 անգամ աճի դիմաց, հարակից Գեղարքունիքի և Լոռվա մարզերի համապատասխանաբար 2,2 ու 1,5 անգամ աճերի դիմաց:

Մարզի արդյունաբերության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է՝ Առավել գերակշռող են սննդարդյունաբերությունն ու փայտամշակումը: Մարզում արտադրվում է բենտոնիտի, երեսապատման սալիկներ, գինիներ, պահածոներ, իսկ

2015թ. Չորաթան համայնքում հիմնվել է կարի ֆարրիկա, որտեղ աշխատում են ավելի քան 200 աշխատակիցներ, հիմնականում կանայք: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են արտահանվում գինիներ, հանքային ջուր, քարե և փայտե արտադրատեսակներ: ՀՀ Տավուշի մարզում գրանցված են ավելի քան 145 արտադրական և 1038 առևտրային կազմակերպություններ, 83 կազմակերպություն 10 000 բնակչի հաշվով: Հիմնական աշխատատեղեր են ստեղծում միջին մեծության ձեռնարկություններն ու առևտրային կազմակերպությունները:

2015 թ. դրությամբ ՀՀ Տավուշի մարզում գործում էր 59 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 3406 սանով՝ 16 նախակրթարան՝ 228 սաներով և 43 մանկապարտեզ՝ 3178 սանով: 2011թ. մինչ 2015թ. նախադպրոցական հաստատությունների թիվն ավելացել է 13-ով, 46-ից դառնալով 59:

Միննույն ժամանակ, վերլուծելով մեկ բնակչի հաշվով նախադպրոցական հաստատությունների վիճակը մարզում պարզ է դառնում, որ մարզը ապահովվածությունը նախադպրոցական հաստատություններով ավելի քան 1.5 անգամ գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը և շուրջ կրկնակի անգամ գերազանցում է հարակից մարզերի որոշ ցուցանիշներ:

ՀՀ Տավուշի մարզում գործում են արվեստի 1 պետական քոլեջ /նախարարության ենթակայությամբ/, 11 երաժշտական, գեղարվեստի և արվեստի 5 դպրոց, 32 մշակույթի տուն և ակումբ, 1 մարզային և 40 քաղաքային ու գյուղական գրադարան, 4 զբոսայգի, 1 մշակույթի և ժամանցի կենտրոն /«Ավանդույթ» ՓԲԸ/, 2 պատկերասրահ /Իջևան, Դիլիջան/, 1 ժող. թատրոն /Նոյեմբերյան/, 4 ժող. նվագարանների համույթ, 4 թանգարան: Կան պատմամշակութային և տեղական նշանակության հուշահամալիրներ, հուշակոթողներ, հուշարձաններ և այլն:

4. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տարածքը ներառված է Դիլիջան խոշորացված համայնքի Հովք բնակավայրի հողերում: Հովք բնակավայրը զբաղեցնում է 13,8կմ տարածք: 01.01.2017թ.-ի դրությամբ բնակչության թիվը կազմում է 430 մարդ:

Հովք գյուղը մինչև հայ-ադրբեջանական հակամարտությունը բնակեցված է եղել ադրբեջանցիներով: 90-ական թվականներին այն բնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայերով՝ Նախկինում գյուղը կոչվել է Հախկիսու, Վուրդուն, իսկ այժմ ստացել է հայեցի Հովք անունը: Բնակավայրում հաշվառված են 195 ընտանիք: Բնակչության հիմնական զբաղմունքը բուսաբուծությունն է և անասնապահությունը: Գյուղի հողերի 152.04հա-ը վարելահողեր են, 403.3հա-ը՝ արոտներ: Բնակավայրը գազաֆիկացված չէ, ճանապարհների վիճակը բավարար: Գյուղում գործում է դպրոց 120 աշակերտի համար, բուժկետ, համայնքային կենտրոն:

Հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների նպատակով հայցվող տեղամասի տարածքը ներկայացված է անտառային նպատակային նշանակության հողերով: Հիդրոերկրաբանական հետազոտական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել է համայնքի բնակիչներին: Նախնական գնահատման հայտին կից տրամադրվում է նաև հանրային քննարկումների արձանագրությունը:

5. Պատմության մշակութային հուշարձաններ

Տավուշի մարզի Հովք գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը հաստատվել է 2002 թ.-ին ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 7 հուշարձան և ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն որոշմամբ, ցանկում ներառված է ընդամենը 1 երկրաբանական հուշարձան:

Հուշարձանի անվանումը	Ժամանակաշրջանը	Գտնվելու վայրը
1. Ամրոց (ավերակներ)	միջնադար	գյուղի հվ-ամ կողմում
2. Գերեզմանոց	12-14 դդ.	գյուղից մոտ 2 կմ ամ, անտառում, զույգ մատուռների ամ կողմում
3. Մատուռ «Մուրբ» կամ «Խաչ»	12-13 դդ.	
4. Մատուռ «Մուրբ» կամ «Խաչ»	12-13	
5. Խաչքար	14 դ.	գյուղի մեջ, Հ. Հայրապետյանի տան բակում
6. Խաչքարեր	12-14 դդ.	գյուղի մեջ
7. Մատուռ	13-14 դդ.	գյուղի դիմաց, գետի մյուս ափին, ճանապարհից

Երկրաբանական հուշարձան

1. «Քվարցային պլագիոպորֆիրների պլունաձև անջատումներ»	Տավուշի մարզ, Հովք գյուղից 900 մ դեպի հս-ալ, Աղսուն գետի ձախ ափին, Երևան- Իջևան ավտոմայրուղու ձախ կողմում
------------------------------------------------------	-----------------------------------------------------------------------------------------------------------

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասը գտնվում է նշված հուշարձաններից ավելի քան 4,3կմ հեռավորության վրա, հետևաբար հիդրոերկրաբանական ուսումնասիրության աշխատանքները որևիցե բացասական ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա չի դրսևորվելու:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասում հիդրոերկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում աննշան ճնշումներ են դրսևորվելու շրջանի մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի վրա:

Մթնոլորտային օդ.

Արդյունահանման աշխատանքների ժամանակ մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության աղբյուր է լինելու աշխատանքներ իրականացնող մասնագետներին տեղափոխող ավտոտրանսպորտը:

Բուն հիդրոերկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ աղբյուրների կապտաժի շինարարության ժամանակ նույնպես հնարավոր է աննշան քանակությամբ փոշու արտանետում, քանի որ կատարվելու է աղբյուրների շրջակայքի մաքրում քարաբեկորներից, ավազից և տիղմից :

Համաձայն շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերվող նախագծման նորմերի (СНП 11-01-95, СНП 1.02.01-85)՝ սահմանային թույլատրելի խտությունները ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի, մրի և ծծմբային գազի համար համար համապատասխանաբար կազմում են 0,0005գ/մ³; 0,000085գ/մ³; 0,00015գ/մ³; 0,0005գ/մ³:

Նախնական հաշվարկներին համաձայն, աշխատանքների ընթացքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան.

Քաղցրահամ ջրի աղբյուրների արդյունահանման աշխատանքների նպատակն է ապահովել ջրային ռեսուրսների պահպանությունը և արդյունավետ օգտագործումը: Կատարվելու է քաղցրահամ ջրերի աղբյուրների տարածքի մաքրում, ինչը կկանխի ջրերի պղտորումը տիղմ-ավազային զանգվածի հետ խառնման պատճառով: Արդյունահանում իրականացնող մասնագետների տեղաշարժը կատարվելու է կամուրջներով:

Արդյունահանման աշխատանքների տեխնոլոգիան արտահոսքեր, որնիցե ռեազենտների օգտագործում չի ենթադրում, հետևաբար աշխատանքները չեն հանդիսանա մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտման աղբյուր:

Հողաբուսական ծածկույթ.

ՀՀ տարածքի հողային ծածկույթը աչքի է ընկնում բացառիկ բազմազանությամբ, որը տարբեր գործոնների ազդեցության հետևանք է: Դրանք են մակերևութի տարաբնույթ ապարները, կլիմայական պայմանները (ջերմություն, խոնավություն), բուսականությունը և տեղանքի ռելիեֆը: Հայաստանին՝ որպես լեռնային երկրի, բնորոշ է հողածածկույթի փոփոխությունը ոչ միայն հորիզոնական, այլև վերընթաց ուղղությամբ:

Թիվ 1 և 2 ստորերկրյա քաղցրահամ ջրի հանքավայրի տարածքում երթուղիները և ստացիոնար դիտարկումները չեն հանգեցնի հողային ծածկույթի խախտմանը: Աղբյուրների ելքերում անհրաժեշտ կլինի կատարել դրանց քարաբեկորներից, խճերից, ավազներից և կավերից մաքրման աշխատանքներ՝ շուրջ 1.0մ3 հողային ծավալով յուրաքանչյուր աղբյուրի համար: Աղբյուրների ելքերը արդեն իսկ կահավորված են եռանկյուն ջրթափով և լրացուցիչ շինարարական աշխատանքներ չեն պահանջվում:

Կենցաղային թափոնները (սննդի մնացորդ, փաթեթավորման տոպրակներ, շշեր և այլն), որոնք առաջանալու են արդյունահանման աշխատանքների ժամանակ կուտակվելու են հատուկ աղբի տոպրակների մեջ (առավելագույնը 35լ օրական), տեղադրվելու են աշխատանքները սպասարկող ավտոտրանսպորտի մեջ և յուրաքանչյուր օր տեղափոխվելու են Հովք բնակավայրում առկա 0,7իւ.մ տարողությամբ մետաղյա աղբամաններ:

Հողը կարևոր և անփոխարինելի բնական ռեսուրս է և այն պետք է պահպանել տեղատարումից, էրոզիայից և ազտոտումից:

Բուսական և կենդանական աշխարհ.

Արդյունահանման աշխատանքների ազդեցությունը տեղամասի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է: Ծառահատումներ, հողերի խախտում աշխատանքների ընթացքում չի նախատեսվում և չի իրականացվի: Լանդշաֆտային ամբողջականությունը չի խախտվելու:

Կենդանական աշխարհի վրա ազդող միակ բացասական գործոնը աղմուկն է, սակայն աշխատանքների իրականացման ժամանակ ծանր տեխնիկա, հորատման հաստացներ կամ այլ սարքավորումներ չեն կիրառվելու, հետևաբար աղմուկի մակարդակը չի գերազանցելու նորմատիվային փաստաթղթերում ամրագրված սահմանաչափերը:

Քաղցրահամ աղբյուրներին հարակից տարածքները հաշվառված չեն որպես ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների ապրելա- կամ աճելավայրեր: Հետևաբար, էնդեմիկ, հատուկ պահպանվող կարգավիճակի ունեցող կենսաբազմազանության վրա նույնպես բացասական ազդեցություններ չեն դրսևորվելու:

Պատմամշակութային և բնության հուշարձաններ աղբյուրների տարածքում չկան: Դաշտային երթուղիները նույնպես չեն անցնելու պատմամշակութային և բնության հուշարձաններին, դրանց պահպանման գոտիների տարածքներով:

**5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

1. Աշխատանքի ընթացքում առաջացող կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ (առավելագույնը 35լ տարողությամբ), աշխատանքների ընթացքում աղբի տեղափոխում ընկերության սեփական ավտոտրանսպորտով դեպի Հովք բնակավայրի աղբամանները :

2. Ավտոտրանսպորտի շահագործում միայն սարքին վիճակում :

3. Արտաթորվող նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :

4. Հիդրոերկրաբանական ուսումնասիրության մաս կազմող դաշտային երթուղիների համար նախատեսված տարածքում բուսականության դիտարկում՝ ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակներ բացահայտման նպատակով: Նման բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

ա) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

բ) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,

գ) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝

զենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

5. Դաշտային երթուղիների համար նախատեսված տարածքի դիտարկում՝ կենդանիների բների, որջերի հայտնաբերման նպատակով : Եթե այդպիսիներ կդիտարկվեն, ապա երթուղիների տեղադրվածությունը կփոփոխվի :

6. Տարեկան երկու անգամ աշխատանքների ընթացքում օգտագործվող ավտոտրանսպորտի տեխնիկական վիճակի զննումների իրականացում : Այս միջոցառումը թույլ կտա ապահովել արտանետումների թույլատրելի քանակությունները, ինչպես նաև բացառել կենդանական աշխարհի համար անհանգստության պատճառ հանդիսացող աղմուկի մակարդակը :

7. Արդյունահանման աշխատանքներ իրականացնող անձնակազմի համար կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժական կապ), որով հնարավոր է կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ:

Ընկերության կողմից նախատեսվող աշխատանքի անվտանգության և բնապահպանական միջոցառումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակ 7 և 8-ում:


Շրջակա միջավայրի աղտոտումը կանխարգելելու նպատակով շշալցման արտադրամասի կառուցման ժամանակ՝ յուրաքանչյուր շաբաթ կկատարվի օդի աղտոտվածության մշտադիտարկում՝ փոշու, ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի, մրի և ծծմբային գազի կոնցենտրացիաների որոշում (նկար 9):

Աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղման միջոցառում	Մեղման հայտանիշ
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	<ul style="list-style-type: none"> - Արդյունահանման աշխատանքներ իրականացնող անձնակազմը ապահովվում է Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ) - Սպասարկող ավտոմեքենան օգտագործվում է տեխնիկական զննում իրականացնելուց հետո - Աշխատակիցները իրագեկվում են պաշտպանության հրահանգների վերաբերյալ 	- Անվտանգության հրահանգների խախտումներ չեն արձանագրվել
2. Արդյունահանման աշխատանքներ	Օդի աղտոտում փոշով և արտանետումներով	<ul style="list-style-type: none"> - Փոշեգոյացման կանխում ավտոտրանսպորտի տեղաշարժման ժամանակ - Բաց այրման արգելում - Շշայցման արտադրամասի տեղադրման շինարարության ավարտից հետո շինանյութերի շինանյութերի ավելցուկի տեղափոխում 	<ul style="list-style-type: none"> - Ավտոտրանսպորտը շահագործվում է սարքին վիճակում - Կենցաղային աղբը տեղափոխվում է Հովք համայնքի աղբամաններ - Աղբյուրների տարածքում չկան շինանյութերի մնացորդներ
	Աղմուկ	- Ամտոմեքենայի կանխարգելիչ վերանորոգում աղմուկը նվազեցնելու նպատակով	- Ավտոմեքենան շահագործվում է սարքին վիճակում

Մոնիթորինգի պլան

Գործողություն	Ի՞նչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունականությունը)	Ինչու՞ է (հսկվում)
1. Փոշի, ծխազագեր	Օդի վիճակը	Աղբյուրների տարածք	Գործիքային չափումներ	Կապտաժի նորոգման ընթացքում՝ յուրաքանչյուր շաբաթ	Նվազեցնել ռիսկերը անձնակազմի և հարևան համայնքների համար
2. Աղմուկ, Ավտոմեքենայի սպասարկում	Ավտոմեքենայի տեխնիկական վիճակը	Աղբյուրների տարածք	Տեսողական գնում	Տարեկան մեկ անգամ	Նվազեցնել անհարմարությունները անձնակազմի և հարևան համայնքների համար
3. Պատրաստվածու- թյուն արտակարգ իրավիճակներին	Ահազանգման և տեղայնացման համակարգերի առկայություն	Արդյունահանման աշխատանքների տարածք	Շարժական կապի առկայություն	Արդյունահանման աշխատանքների ընթացքում	Նվազեցնել ռիսկերը անձնակազմի և համար



Նկար 9

Գրականություն

1. ՀՀ Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ, 2017-2018թթ.
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. ՀՀ Տավուշի մարզպետարանի պաշտոնական կայք

Վ.Է.Վ.

ՍԱՐՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հ Վ Հ Հ - 07621327

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք.Իջևան, Արցախյան 94-2
Հեռախոս՝ 094-228200

№ 47

“19__” օգոստոսի 2021թ.

«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ տիկին Լ. Շուշանյանին

Հարգելի տիկին Շուշանյան

Ի պատասխան Ձեր 09.08.2021թ. թիվ ԼՇ/26.1/20274-2021 գրության ներկայացնում եմ «Վ.Է.Վ.» ՍՊ ընկերության պարզաբանումներն ու հիմնավորումները «Տավուշի մարզի Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի հանքավայրի թիվ 1 և 2 աղբյուրների արդյունահանման աշխատաքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի «Շրջակա միջավայրի նախարարության 2021 թվականի օգոստոսի 5-ի N 4/26.6/10027-2021 գրությամբ տրամադրված առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ:

Առդիր.

- դիտողությունների պարզաբանումներըն ու հիմնավորումները – 9 թերթ,
- լրամշակված հայտը /թղթային և էլեկտրոնային տարբերակներով/:
- աշխատանքների տեղամասի հատակագիծը:
- հողի նշանակության մասին տեղեկանք
- Շշալցման գործարանի հողամասի հատակագիծ

«Վ.Է.Վ.» ՍՊԸ տնօրեն՝



Ա. Դավթյան

Դիտողություններ կայացրած գերատեսչությունը	Դիտողությունը/առաջարկությունը	Պարզաբանումը/հիմնավորումը
1	2	3
Արտակարգ իրավիճակների նախարարություն	<p>Արտակարգ իրավիճակների նախարարությունը Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի հանքավայրի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ Արտակարգ իրավիճակների նախարարությունն առաջարկություններ չունի, սակայն տեղեկացնում է, որ հանքարդյունահանման աշխատանքների նախագծային փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննության՝ համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 11-րդ հոդվածների:</p>	Արտակարգ իրավիճակների նախարարության առաջարկությունն նդունվել է ի գիտություն
ՀՀ առողջապահության նախարարություն	<p>Առողջապահության նախարարությունը Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի հանքավայրի թիվ 1 և 2 աղբյուրների արդյունահանման աշխատանքների, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ դիտողություններ չունի:</p> <p>Նախարարությունն առաջարկում է իրականացվող շինարարական աշխատանքների և կազմակերպության շահագործման ընթացքում պահպանել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և</p>	ՀՀ առողջապահության նախարարության առաջարկությունն ընդունվել է ի գիտություն

	<p>նորմերի պահանջները:</p>	
<p>ՀՀ կադաստրի կոմիտե</p>	<p>Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի հանքավայրի (այսուհետ՝ Հանքավայր) թիվ 1 և 2 աղբյուրների արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.</p> <p>Հանքավայրի առաջին աղբյուրի տարածքի՝ ներկայացված կոորդինատներով եզրագիծը (մակերեսը՝ 0.3579 հեկտար) կադաստրային քարտեզում տեղադրելիս ամբողջությամբ համընկնում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հովք գյուղում գտնվող 11-044-0107-0007 կադաստրային ծածկագրով, պետական սեփականություն հանդիսացող (անհատույց օգտագործման իրավունքով տրված «Հայանտառ» ՊՈԱԿ-ին, վարձակալությամբ տրված Հայտը ներկայացրած «Վ.Է.Վ.» ՍՊԸ-ին) անտառային նշանակության անտառի սահմանների հետ:</p> <p>Հանքավայրի երկրորդ աղբյուրի տարածքը (մակերեսը՝ 0.15015 հեկտար) ներկայացված կոորդինատներով կադաստրային քարտեզում տեղադրելիս համադրվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հովք գյուղի հետևյալ կադաստրային ծածկագրերով հողամասերի հետ՝</p> <ul style="list-style-type: none"> • 11-044-0311-0007 - պետական սեփականություն հանդիսացող (անհատույց օգտագործման իրավունքով տրված «Հայանտառ» ՊՈԱԿ-ին, վարձակալությամբ տրված Հայտը ներկայացրած «Վ.Է.Վ.» ՍՊԸ-ին) անտառային նշանակության անտառ, 	<p>Կադաստրի կոմիտեի ներկայացված տեղեկատվությունն ընդունվել է ի գիտություն:</p> <p>Ընկերությունը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ ունի համապատասխան համաձայնությունները</p>

	<ul style="list-style-type: none"> • 11-044-0311-0001 - պետական սեփականություն հանդիսացող անտառային նշանակության անտառ, • 11-044-0561-0002 - պետական սեփականություն հանդիսացող (անհատույց օգտագործման իրավունքով տրված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության տրանսպորտի օբյեկտների հող: 	
<p>ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>Նախնական գնահատման հայտում ներկայացնել նախատեսվող գործունեության տեղամասերի հողի նպատակային նշանակության և պատկանելիության վերաբերյալ տվյալներ</p>	<p>Հողերի նպատակային նշանակությունը բերված է ՀՀ կադաստրի կոմիտեի եզրակացության մեջ՝ դրանք անտառային նշանակության հողեր են, ծրագրի ընդհանուր բաժնի 1.1 ենթաբաժնում ավելացվել է</p>
	<p>աշխատանքների կատարման ընթացքում բացառել հարակից տարածքներում անտառային որևէ ծառաթփատեսակների հատում իրականացնելու դեպքերը</p>	<p>Աշխատանքների իրականացման ժամանակ բացառվում է ծառահատումը, քանի որ աղբյուրների տեղամասերում շինարարական աշխատանքներ չեն նախատեսվում, իսկ տարածքը, որտեղ կառուցվելու է շալցման արտադրամասը գուրկ է ծառերից և թփերից:</p>
	<p>1/ նախագծում ներկայացված բնության հուշարձանների ցանկը ճշգրտել համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի " 967-Ն որոշման</p>	<p>ծրագրում ավելացվել է 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն որոշմամբ հաստատված երկրաբանական հուշարձանը</p>
	<p>2/ <Մոնիթորինգի մշտադիտարկման պլան> աղյուսակում նախատեսել կենսաբազմազանությանն մոնիթորինգ /տարին մեկ անգամ/.</p>	<p>Կատարվել է շտկում, կենսաբազմազանությանն մոնիթորինգը նախատեսվում է տարին մեկ անգամ</p>
	<p>3/ Ներկայացված կոորդինատների համաձայն նշված</p>	<p>Աշխատանքների տարածքը համաձայն ՀՀ</p>

	<p>տարածքը գտնվում է “Դիլիջան” ազգային պարկի պահպանման գոտում, հետևաբար գործունեություն իրականացնելիս հաշվի առնել ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի՝ 967-Ն որոշման 4-րդ գլխի պահանջը</p>	<p>կադաստրի կոմիտեի եզրակացության գտնվում է հանքավայրի առաջին աղբյուրի տարածքի՝ ներկայացված կոորդինատներով եզրագիծը (մակերեսը՝ 0.3579 հեկտար) կադաստրային քարտեզում տեղադրելիս ամբողջությամբ համընկնում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հովք գյուղում գտնվող 11-044-0107-0007 կադաստրային ծածկագրով, պետական սեփականություն հանդիսացող (անհատույց օգտագործման իրավունքով տրված «Հայանտառ» ՊՈԱԿ-ին, վարձակալությամբ տրված Հայտը ներկայացրած «Վ.Է.Վ.» ՍՊԸ-ին) անտառային նշանակության անտառի սահմանների հետ, իսկ երկրորդ աղբյուրի տարածքը (մակերեսը՝ 0.15015 հեկտար) համադրվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հովք գյուղի հետևյալ 11-044-0311-0007, 11-044-0311-0001 և 11-044-0561-0002 կադաստրային ծածկագրերով հողամասերի հետ, որոնցից 1-ին երկուսը հանդիսանում են անտառային նշանակության հողեր անհատույց օգտագործման իրավունքով տրված «Հայանտառ» ՊՈԱԿ-ին, վարձակալությամբ տրված Հայտը ներկայացրած «Վ.Է.Վ.» ՍՊԸ-ին), իսկ երրորդը՝ պետական սեփականություն հանդիսացող (անհատույց օգտագործման իրավունքով տրված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին) Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության տրանսպորտի օբյեկտների հող:</p>
--	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

		<p>Այսինքն “Դիլիջան” ազդային պարկի մասին ոչ մի նշում չկա.</p>
	<p>4/ “Գրականություն” բաժնի 3-րդ և 4-րդ կետում ճշտել բույսերի և կենդանիների Կարմիր գրքերի հրապարակության տարեթվերը</p>	<p>“Գրականություն” բաժնի 3-րդ և 4-րդ կետերում տարեթվերը ճշտվել են</p>
	<p>Ջրային ռեսուրսներն աղտոտումից պաշտպանելու նպատակով հարկավոր է միջոցառումներ կիրառել , որպեսզի բացառվի ծանր մետաղների, ինճպես նաև քսայուղերի և դիզելային վառելիքի արտահոսքը դեպի մոտակա ջրային ռեսուրս</p>	<p>Մետաղների, ինչպես նաև քսայուղերի և դիզելային վառելիքի արտահոսքը դեպի մոտակա ջրային ռեսուրս բացառվում է, քանի որ աղբյուրները կապտած են արված և գտնվում են 1-ին սանիտարական գոտում:</p>
	<p>5-րդ էջում նշված է, որ նախատեսվում է կառուցել շալցման արտադրամաս իր ենթակառուցվածքներով՝ տարածքի կցված հատակագծով, սակայն հատակագիծը բացակայում է</p>	<p>տարածքի հատակագիծը կցվում է</p>
	<p>նշված է որ թիվ 1 և 2 աղբյուրները գտնվում են սողանքային գոտում, սակայն հակասողանքային միջոցառումներ նախատեսված չեն.</p> <p>Հայտը ներկայացնել սողանքների կառավարման լիազոր մարմնին սողանքային գոտում աղբյուրների շահագործման ազդեցությանը մասնագիտական գնահատական տալու համար</p>	<p>Դիտողությունը չի ընդունվել: Նախնական գնահատման հայտի “Ռելիեֆ, երկրաձևաբանություն” բաժնում հստակ նշված է, որ սողանքային մարմինը որի սահմաններում գտնվում է թիվ 1 աղբյուրը կայունացված է, բացակայում են ակտիվության նշանները: Այստեղ չեն արձանագրվել ճեղքեր, խախտված չէ բուսական ծածկույթը: Այս մասին նշված է նաև Ճապոնիայի միջազգային զարգացման գործակալության մասնագետների կողմից կատարված ՀՀ սողանքային աղետի գնահատման հաշվետվության մեջ, որի պատճառով էլ սողանքների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների և դրանց մեղմացմանն ուղղված</p>

	<p>նախագծում անհրաժեշտ է հստակեանել արդյոք խոսքը գնում է ստորերկրյա քաղցրահամ ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործման մասին թե ոչ, քանի որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի համաձայն ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ ջրային օրենսգրքով, իսկ հանաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 21-րդ հոդվածի ցանկացած տեսակի ջրօգտագործման համար յուրաքանչյուր ոք պարտավոր է ստանալ ջրօգտագործման թույլտվություն, ինչը տրամադրում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը՝ ներկայացված հայտի հիման վրա /ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 29, 30/.</p>	<p>միջոցառումների տեղեկատվություն չի ներկայացվում</p> <p>Ծրագրի Հանքավայրի պաշարները բաժնում /էջ 32/ հստակ նշված է, որ խոսքը գնում է ստորերկրյա քաղցրահամ ջրի հանքավայրի մասին: Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի թիվ 1 և 2 աղբյուրների պաշարները հաստատված և հաշվառված են ՀՀ օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերնակումների պետական կադաստրում, որպես ստորերկրյա քաղցրահամ ջրի հանքավայր /Հանքապետական երկրաբանական ֆոնդ՝ ՊՈԱԿ – հաշվառման համար ` 7046 ընդհանուր/:</p> <p>Ընկերությունը դիմել է տրամադրել օգտակար հանձոյի հանքավայրի շահագործման իրավունք, որը չի կարգավորվում ՀՀ ջրային օրենսգրքով:</p> <p>Խնդրում եմ ուղորդել որևէ իրավական ակտ, կամ օրենքի մի հոդված, որտեղ կտրվի թե ինչ է իրենից ներկայացնում ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման առանձնահատկություն տերմինը: Ընկերությունը հայցում է ստանալ ոչ թե ջրի առանձնահատկությունների վերաբերյալ թույլտվություն, այ ընկերությունը ուղորդվում է ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 49-րդ հոդվածով, որի 1-ին կետը սահմանում է, որ 1. Իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը) մետաղական օգտակար հանածոների արդյունահանման</p>
--	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

		<p>իրավունք ստանալու նպատակով կարող է դիմել լիազոր մարմին այն հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի համար, որտեղ դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նախորդող 10 տարվա ընթացքում ընդերքաբանական փորձաքննության արդյունքներով հաստատվել են օգտակար հանածոյի պաշարներ: Օգտակար հանածոյի պաշարների հաստատման ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, որի դրությամբ կազմվել է ընդերքաբանական փորձաքննության ներկայացված և հաստատված պաշարների վերաբերյալ հաշվետվությունը:</p> <p>Նույն օրենսգրքի Հոդված 3 10-րդ կետը տրվում է օգտակար հանածոյի սահմանումը՝ ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո.</p> <p>Նույն օրենսգրքի Հոդված 7 –ի 4-րդ կետը սահմանում է՝ Ընդերքի տրամադրումն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թույլատրվում է միայն դրանում պարունակվող պաշարների վերաբերյալ տեղեկությունների</p>
--	--	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

		<p>արժանահավատության ընդերքաբանական փորձաքննությունից և ուսումնասիրված ու գնահատված պաշարների քանակը և որակը սահմանված կարգով հաստատվելուց հետո:</p> <p>Այսինքն հայցվող քաղցրահամ աղբյուրների ջրերը օգտակար հանածո են և դրանց պաշարները հաստատված են:</p>
	<p>Միաժամանակ նախագծի՝</p> <p>15-րդ էջում նշվում է որ “Հովքի տեղամասի թիվ 1 աղբյուրը ներառված է սողանքային մարմնի սահմաններում” Սողանքը կայունացված է, մակերեսին չկան արտահայտված ճեղքեր, բուսական ծածկույթի ամբողջականությունը խախտված չէ” Առաջարկում եմ նախագիծը ներկայացնել սողանքների կառավարման լիազոր մարմնին կարխիքի՝ աշխատողների անվտանգության ապահովման, ինչպես նաև սողանքային երևույթների ակտիվացման բացասական ազդեցությունների կանխարգելման նպատակով</p>	<p>վերևում արդեն իսկ անրադարձել ենք այս նույն հարցին, դիտողությունը ընդունում ենք ի գիտություն և եթե առաջանա անհրաժեշտություն սողանքային երևույթների կանխարգելման միջոցառումներ կազմակերպելու, ընկերությունը անպայման կդիմի սողանքների կառավարման լիազոր մարմնին մասնագիտական գնահատական ստանալու համար, սակայն նորից նշում եմ, որ այդ սողանքը կանգնած սողանք է և դրանից վտանգ չի սպասվում և արդեն շուրջ 15 տարի է որ նշված աղբյուրները գործում են և դրանց տեղադիրքերի և հարակից տարածքի բուսական ծածկույթի փոփոխություն չի եղել, ճեղքեր չեն առաջացել, որը և վկայում է որ սաղանքը չգործող է:</p>
	<p>24-րդ էջում նշվում է, որ “Դիլիջան” ազգային պարկի և քաղցրահամ աղբյուր 1-ի միջև հեռավորությունը կազմում է 1.5կմ, իսկ քաղցրահամ աղբյուր 2-ի միջև 3.05կմ, քանի որ համաձայն կառավարության 2002թ մայիսի 11-ի ԴՊՈ-Ն որոշման տարածքը ընդգրկված է “Դիլիջան” ազգային պարկի պահպանության գոտու տարածքում անհրաժեշտ է</p>	<p>Ընդունվել է ի գիտություն:</p>

<p>հաշվի առնել տվյալ տնտեսական գործունեության նպատակահարմարության հարցը</p>	
<p>“Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն” ՊՈԱԿ բառերը համապատասխանեցնել շրջակա միջավայրի նախարարության ներկայիս կառուցվածքին</p>	<p>“Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն” ՊՈԱԿ բառերը փոխարինվել է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ բառերով</p>
<p>Հայտի “Շրջանի կլիման” և “Ջրային ռեսուրսներ” բաժիններում ընդգրկված մոնիթորինգային տվյալների վերաբերյալ դիտողություններ չկան, իսկ :Մթնոլորտային օդ: բաժնում մթնոլորտային օդի ելակետային վիճակը բնութագրող մոնիթորինգի տվյալներ չկան</p>	<p>համապատասխան բաժնում բերվել է Իջևանի մետրոլոգիական կայանի կողմից տրված շրջանի բազմամյա միջին ամսական և միջին տարեկան քամիների տարածման, խոնավության և տեղումների վերաբերյալ 5-ամյա տվյալներ:</p>
<p>Նշված տարածքները գտնվում են “Հայանտառ” ՊՈԱԿ-ի Իջևանի անտառտնտեսության մասնաճյուղի հողային հաշվեկշռում և առաջիկայիում ՊՈԱԿ-ը նախատեսում է իրականացնել լայնածավալ անտառապատման և անտառավերանգման աշխատանքներ:</p>	<p>Ընդունվել է .ի գիտություն և միաժամանակ փաստում եմ, որ ընկերությունը պատրաստակամ է այդ հարցում աջակցելու Հայանտառ” ՊՈԱԿ-ի Իջևանի անտառտնտեսությանը:</p>

<Վ.Է.Վ> ՍՊԸ տնօրեն



Ս.Դավթյան

ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԳԻԾ

Էջ 1
Պատճառագրություն N 3
76 կատարված է 2011 թ. հոկտեմբերի 20-ի N 284-Ն կրճատման
օրենքի կարգադրությամբ կատարված կառուցման նախագծի
համապատասխանության ստուգումը

Տավուշ

գ. Հովք

Հասցե

Սարգ


Համայնք

ՄԱՍՏՏԱԲԸ 1:2000

Հաստատում են

համայնքի ղեկավար

17.11.2021
123/06 1.2021/1



Հ ող ա մ ա ս ի				
Հիշատակարձային (բեկման) կետեր	Կողորդինատներ		Գծային չափեր	Սահմանափակ սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)
	X	Y		
1	8505823.0000	4516044.0000	61.00	
2	8505884.0000	4516044.0000	68.00	
3	8505884.0000	4515976.0000	63.00	
4	8505821.0000	4515976.0000	47.42	
5	8505841.0000	4516019.0000	30.81	
1	8505823.0000	4516044.0000		

Հ ող ա մ ա ս ի				
Հիշատակարձային (բեկման) կետեր	Կողորդինատներ		Գծային չափեր	Սահմանափակ սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը)
	X	Y		
1	8505241.0000	4517498.0000	18.96	
2	8505244.1166	4517516.6994	39.74	
3	8505281.1507	4517531.1238	33.13	
4	8505282.0000	4517498.0000	41.00	
1	8505241.0000	4517498.0000		

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

<<Վ.Է.Վ>> ՍՊԸ

ին հողատեղամասի հիմք

Տախտիկ


Մ ա ռ զ

Գ. Հովսեփյան

Հ ա մ ա յ ն ք

Հ ա ս ց Ե

Մասշտաբ 1:2000



Հ ո ղ ա մ ա ս ի

Մակերեսը (հա)	0.29423	Գտնվող (դրոշմ) ընթացք		Կտորինաստներ		Սահմանված սեփականատեր (օգտագործող) անուն, ազգանուն (անվանումը)	Արժեքի հարմարություն	Գործարարական նշանակությունը (անվանումը)	Գտնվող (դրոշմ) ընթացք	Կտորինաստներ
Ծածկագիր	11-044-0311-0002			X	Y				X	Y
Նպատակային նշանակությունը										
Գործարարական նշանակությունը										
Հողամասը										
Ծանոթություններ										



ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԳԻԾ

Տարածք


գ. Հովք

Հասցե

ՄԱՍՇՏԱԲԸ 1:2000

Հաստատում են՝

համայնքի ղեկավար



Նպատակային նշանակությունը	Անտառ
Փորձառական նշանակությունը	Անտառ
Հողամասը	
Ճանրաբեռնված է	

Որակավորման վկայականի

0191

(Բամբոջ)

30.05.2012թ.

(Տրման ամիս, ամսաթիվը)


Իրավաբանական անձի

01U258139

(Կիստական գրանցման անվանումը)

Արմեն Ակունց ԱԶ

(անվանումը)




Կ.Տ.

(ստորագրություն)

Հողամասի կտրորինաստներ			Սահմանված սեփականության (օգտագործողի) ամուն, ազգանունը (անվանումը)
Երկրի (դրոյի) անունը	X	Y	
1	8505241.0000	4517498.0000	18.96
2	8505244.1166	4517516.6994	39.74
3	8505281.1507	4517531.1238	33.13
4	8505282.0000	4517498.0000	41.00
1	8505241.0000	4517498.0000	

Հողամասի կտրորինաստներ			Սահմանված սեփականության (օգտագործողի) ամուն, ազգանունը (անվանումը)
Երկրի (դրոյի) անունը	X	Y	
1	8505823.0000	4516044.0000	61.00
2	8505884.0000	4516044.0000	68.00
3	8505884.0000	4515976.0000	63.00
4	8505821.0000	4515976.0000	47.42
5	8505841.0000	4516019.0000	30.81
1	8505823.0000	4516044.0000	



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԻ ԱՎՈՒՅՑԱԿԱՆ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ ՎԵՐՄԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԼ ԲԱԶՄԱՆԻ ԿՐԵԴԻՏՈՐԻ ԿՈՄՊԵՆԻՅԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԻ ԱՎՈՒՅՑԱԿԱՆ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ ՎԵՐՄԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԼ ԲԱԶՄԱՆԻ ԿՐԵԴԻՏՈՐԻ ԿՈՄՊԵՆԻՅԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԻ ԱՎՈՒՅՑԱԿԱՆ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ ՎԵՐՄԱՆՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԼ ԲԱԶՄԱՆԻ ԿՐԵԴԻՏՈՐԻ ԿՈՄՊԵՆԻՅԱ